Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«30» հունվարի 2025 թ. թիվ 208 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ԴԵԿԱՆԻ ՊԱՏՎՈ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն Կանոնակարգով սահմանվում են ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) տնօրենի և դեկանի պատվո ցուցակների կազմման նպատակները և դրանցում ուսանողների ընդգրկման չափանիշները և պայմանները:

1.2. Կանոնակարգը սահմանում է Կենտրոնի տնօրենի և դեկանի պատվո ցուցակների կազմման ընթացակարգը, ուսանողների պատվո ցուցակներում ընդգրկման չափանիշները և պայմանները՝ համաձայն ուսանողների առաջադիմության և ակտիվության:

1.3 Պատվո ցուցակների կազմման նպատակն է՝ խրախուսել Կենտրոնի ուսանողների կրթական, գիտական, հասարակական ակտիվությունը, նպաստել մրցակցության բարձրացմանը և կրթության հանրահռչակմանը:

2. ՊԱՏՎՈ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1 Պատվո ցուցակները կազմվում են Կենտրոնի դեկանատի կողմից:

2.2 Կենտրոնի տնօրենի պատվո ցուցակում ընդգրկվում են տվյալ ուսումնական կիսամյակում գերազանց առաջադիմություն ցուցաբերած և առնվազն 19 ՄՈԳ ունեցող բոլոր ուսանողները:

2.3 Կենտրոնի դեկանի պատվո ցուցակում ընդգրկվում են տվյալ ուսումնական կիսամյակում:

ա/ գերազանց առաջադիմություն ցուցաբերած՝ 18.00-18.99 ՄՈԳ ունեցող բոլոր ուսանողները,

բ/ հասարակական և գիտական/հետազոտական ակտիվություն ցուցաբերած այն ուսանողները, որոնց ՄՈԳ-ը առնվազն 16 է (համապատասխան ամբիոնի և/կամ Կենտրոնի հանրային կապերի և կարիերայի բաժնի գրավոր երաշխավորությամբ):

2.4 Կենտրոնի տնօրենի և դեկանի պատվո ցուցակները կազմվում են յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի արդյունքների հիման վրա՝ փետրվար և հուլիս ամիսներին:

3. ՊԱՏՎՈ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

3.1 Յուրաքանչյուր կիսամյակ Կենտրոնի դեկանի կողմից կազմված ցուցակները ներկայացվում են Կենտրոնի տնօրենի հաստատմանը:

3.2 Կենտրոնի տնօրենի և դեկանի պատվո ցուցակները, ըստ կրթական ծրագրերի, հրապարակվում են Կենտրոնի պաշտոնական էլեկտրոնային կայքում, ինչպես նաև փակցվում են դեկանատում:

3.3 Ուսանողի դիմումի հիման վրա տրվում է տեղեկանք՝ տվյալ կիսամյակում տնօրենի կամ դեկանի պատվո ցուցակում՝ ուսանողի ընդգրված լինելու մասին:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կարող են իրականացվել Կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ: